— Բերեցէք:

Նրանք խորին կերպով գլուխ տոեցին եւ միմեանց բօթբօթելով դուրս եկան սենեակից: Ես գնացի նրանց ճանապարհ դնելու: Դրսում մահտեսի Թորոսը դրեց իմ ափի մէջ մի հատ հինգ ղուրուշանոց: Ես ահագին պղնձէ դրամը խփեցի ուղիղ նրա ճակատին:

— Օրինա՛ծ, այդպիսի հանաքներ խօ չեն անում, — ժպտելով ասաց մահտեսի Թորոսը եւ, կռանալով, վեր առեց հինգ ղուրուշանոցը, դրեց իր գրպանում, աւելացնելով, — շատ չա՛րն ես եղել...

Այդ մարդիկը ամէն մի վիրաւորանք կատակի տեղ են ընդունում, որովհետեւ վիրաւորանքին վիրաւորանքով պատասխանելու ոչ քաջութիւն եւ ոչ անձնասիրութիւն ունեն: Բակում հեռոից տեսաւ նրանց վարպետ Փանոսի մայրը եւ ձայն տոեց.

— Համեցէ՛ք, մահտեսի Թորոս, համեցէ՛ք, խօջայ Մկօ, համեցէք խօջայ Հակօ, ո՞ւր էք այդպէս գնում, առանց մի բան ուտելու, առանց մի բան խմելու:

Մահտեսի Թորոսը, խօջայ Մկօն, խօջայ Հակօն նախ շնորհակալութեամբ մերժեցին պառաւի հրաւէրքը, յայտնելով, որ շտապում են, բազարի ժամանակ է, շուկայում շատ գործեր ունեն, յետոյ, պառաւի սիրտը չկոտրելու համար, ընդունեցին նրա հրաւէրքը եւ մտան նրա հետ գինիների մառանը:

Ես զարմացայ. ովքե՞ր էին այդ մարդիկը, որ տանտիկինը այնպէս յարգանքով էր վերաբերւում նրանց: Երբ հարցրի սպասաւորից, որ ձեռքում նախաճաշիկ էր տանում մառանը, նա պատասխանեց.

— Չէ՞ք ճանաչում, մեր քաղաքի ամենահարուստ վաճառականներիցն են: Խոզն այնքան ճարպ չունի, որքան դրանք ոսկիներ ունեն:

Վերադառնալով սենեակը, Ասլանին սաստիկ վրդովոած դրութեան մէջ գտայ: «որքա՜ն ցածութիւն... որքա՜ն ստորութիւնե... ասում էր նա եւ զայրացած կերպով անցուդարձ էր անում սենեակի մէջ:

— Գիտե՞ս, այդ մարդիկը Վանի ամենահարուստ վաճառականներից էին, — ասացի նրան:

— Ես տարակոյս չունեմ, որ ճշմարիտ է: Ասացէք խնդրեմ, — դարձաւ նա դէպի ինձ, — ի՞նչ գաղափար կը կազմէի ես հայերի մասին, եթէ իսկապէս եւրոպացի լինէի: Ահա այդ գարշելի արարածներն են, որ խայտառակում են ամբողջ ազգը, ահա դրանց հանդիպելով եւրոպացին հայոց ամբողջ ժողովրդի վրայ վատ կարծիք է կազմում: